ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Ձեռագրատան վարիչ

ՅՈՒՅԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

N° 717
ԿԱՆՈՆՔ ԱՂՈՒՀԱՅԻՑ

ԹԵՐԹԵՐԸ՝ 150: - ՊՐԱԿՆԵՐԸ՝ 9, Ա և Թ՝ 14, Բ և Գ՝ 16 և մնացածները՝ 18-ական թերթից են բաղկացած:- ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 25.3×17.4×2 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ սպիտակ մաքուր թուղթ: - ԿԱՉՄԸ՝ մուգ նարնջագույն թղթով ծածկված հաստ ստվարաթուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում և վերջում մեկական հաստ կապտավուն թուղթ: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միապուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1ա և 150բ: - ՏՈՂԵՐԸ՝ 16: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է: - ԳԻՐԸ՝ շեղագիր և հայկական նոր նոտաներ: - ՁԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ՝ Հովսեփ Գ. Պըտըլիկյան: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1943 թ.: - ՎԱՅՐԸ՝ Ստամբուլ /Թուրքիա/: - ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանն ստացվել է 9 հունվարի 1984 թ. Ալեք և Մարի Մանուկյան Գանձատնից, ձեռամբ վարիչի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԹԹ. 1բ–147ա.– Տրվում են կանոնները:
ԹԹ. 147բ - 150ա. - Ցանկ կանոնների:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 150ա.- Վերջ
Գրեաց Յովսէփ Գ. Պըտըլիկեան
Եկեղեցական երաժշտութեան ուսուցիչ
Պագրգիւղի Ծնունդ Ս. Աստուածածնի եկեղեցւոյ.
Իսթանպուլ, Յամի Տեառն 1943:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1996 թվականի №№ Թ-ից:

N° 718
ՀԱԻԱՔԱՏՈՒ

ԹԵՐԹԵՐԸ՝ 323: - ՊՐԱԿՆԵՐԸ՝ 28, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի ԻԶ՝ 3, ԻԱ և ԻԵ պրակներից, որոնք 10-ական թերթից են: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 20×15.5×4.5 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ դեղնած դիմացկուն թուղթ: - ԿԱԶՄԸ՝ կարմիր թղթով ծածկված հաստ ստվարաթուղթ: Կապմի վրա, երկու երեսին, ճնշումով նկարված են ոսկեգույն ծաղիկներ և ճյուղեր:- ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում և վերջում երկուական սպիտակ հաստ թուղթ: - ՎԻՃԱԿԸ՝ բավարար, սակայն տեղ-տեղ թղթերը ծակված կամ պատռված են, իսկ մի քանի պրակում էլ որոշ թերթեր պակասում են: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միապուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 180բ-181բ և 322բ-323բ: - ՏՈՂԵՐԸ՝ 27-28: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով: - ԳԻՐԸ՝ նոսրգիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանում միայն մի էջում զարդագրություն կա՝ Թ. 5ա: Այստեղ կա բավականին գեղեցիկ մի գլխապարդ, լուսանցապարդ և թռչնագիր: Օգտագործված են միայն կապույտ և կարմիր գույները: - ԳՐԻՉԸ՝ Ստեփանոս վրդ. Լեհացի: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ անհայտ: - ԾԱՂԿՈՂԸ՝ անհայտ: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1671 թ.: - ՎԱՅՐԸ՝ անհայտ: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանն ստացվել է 9 հունվարի 1984 թ. Ալեք և Մարի Մանուկյան Գանձատան գրադարանից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա -Համառօտ հաւաքումն յաղագս հոգւոյն բանականին:
Յառաջաբանութիւն գրոյս:

Դիտելի է զի տեսութիւն յաղագս բնութենէ մ/ա/րդոյ վերաբերի առ աստուածաբանութիւն, ի կողմանէ մարմնոյ եթէ ոչ ըստ ունակութեան զոր ունի մարմին առ հոգին տեառն, զի հոգի բանական բնականապէս և ըստ ինքեան կարօտ է միաւորութեան ընդ մարմնոյ իւրում նմին իրի. առաջին տեսութիւն լինի յաղագս հոգւոյն: Բայց զի ըստ Դիոնէսիոսի ի գոյացութիւն հոգևորս երեք ինչ գտանին՝ էութիւն, զօրութիւն և ներգործութիւն. վասնզի այսորիկ նախ տեսանելի է զոր ինչ վերաբերի առ էութիւն հոգւոյ: Երկրորդ զոր ինչ վերաբերի առ զօրութիւնս նորին: Երրորդ զոր ինչ վերաբերի առ ներգործութիւնս նորին: Եւ արդ նախասացցուք հոգւոյն ըստ ինքեան և ապա յաղագս միաւորութեան նորա ընդ մարմնոյ:

Յանգ գրոյս.

Գլուխ առաջին յաղագս էութեան հոգւոյն յեօթն պրակս բաժանեալ:
(Այստեղ տրված է նյութերի լրիվ ցուցակը թթ. 1ա-ից մինչև 4բ):
Թ. 182ա.- Համառօտութիւն յաղագս հրեշտակաց:

Յետ ասելոյ յաղագս հոգւոյ բանականին այժմ ճառեսցուք յաղագս բնութեան հրեշտակաց և յատկութեանցն նոցին: Եւ նախ տեսցուք կգոյացութիւն նոցունց ընդարձակապէս որ է առաջին գլուխ և բաժանի ի հինգ պրակս:

(Այստեղ տրված է 24 գլուխների ցուցակը):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 322ա- Յիշատակարան

Վասն զի առաջին թարգմանութիւն գրոցս յաղագս մարդկային հոգւոյն և հրեշտակաց էր յոյժ ապականեալ և այլափոխեալ և մանաւանդ բովանդակն ոչ թարգմանեալ, այլ գրեթէ հաւաքեալ և իբր հասկաքաղ արարեալ նմին իրի, ես Ստեփանոս Իլովացի, յետին ի մանկանց եկեղեցւոյ, և վերջին ի բանասիրաց, ի խնդրոյ ուսումնասէր եղբարց, թողեալ զտկարութիւնս իմ, վերստին լիապէս և կատարելապէս յետ այլ գրոցն թարգմանութեան, զայս ևս երկուս հատորս յաղագս հոգւոյն և հրեշտակաց, ի լատինացւոց բարբառոյ ի հայոց լեզու փոխարկեցի, ի փառս Քրիստոսի Աստուծոյն մերոյ, և յօգուտն ուսումնասէր անձանց, որք դեգերին ի հրահանգս իմաստասիրական հանճարոյ, ի թուականութեանս մերում ՌՃ և Ի (1671 թ.), ի հայրապետութեան սրբազան Տեառն Յակոբայ. ընդ հովանեաւ բարձրագահ սրբոյ աթոռոյս Էջմիածնայ: Արդ եթէ աշխատութիւնս մեր ախորժելի թուեսցի բանասէր անձանցն, և ուղղադատ մտացն գոհութիւն տացի տուողին շնորհացս: Իսկ եթէ ինչ անյարմար ի շարադրութիւնս երևեսցի ներումն տացի պակասութեանս մերում, զի ոչ ոք ամենիւ կատարեալ, և ոչ ամենեցունց հաճոյ գոլ կարելի: Զայս ևս խնդրեմ, զի թէ ոք յօժարեսցի զգիրս օրինակել, մի ձանձրասցի զսակաւ բանս յիշատակարանս դրոշմել և զմեր անարժանութիւնս յաղօթս յիշել, որով և յինքն յիշեսցի ի Քրիստոսէ յուսոյն մերոյ. որ է օրհնեալ յաւիտեանս Ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկզբի պահպանակի վրա գրված է)

Որովհետև ոչ կամեցար լինել աշակերտ ճշմարտութեան ասացից զկամս Հօրն քոյ սատանայի:

Որովհետև ոչ կամեցար լինել աշակերտ ճշմարտութեան ասացից զկամս, Հօրն քո սատանայի է ըստ ասացելոյ առակին. Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր, որդի անմիտ տրտմութիւն է մօր:

Հայրն Տէր Աբրահամ Տէր Կ/ա/ռապետե/ա/ն

1825 Մէի 15ն:

Որովհետև չկամեցար լինել, եւ իր բնա:

/Վերջին պահպանակի վրա գրված է/

Մի յուսայք:

Մինչ խալկացել:
Մինչ խալկացեալ նիրել չանամ
հոգոյս աչացս:
Լավ է անուն բարի, քան թէ գանձս բազումս:
Վասն գրչաց: Ըստ ասից առակին:
Փորձութեան 1860:
Լաւ է գանձ բարի, քան թէ ոսկի բարի:
Դաւիթ Կարապետեան, 1861 ի 20 Մայիսի:
ի վերայ Միոյ պատ:

№ 719
ԲՈՒՄԲԱՅՈՒ ՀԱՅՈՑ ԼՐԱԹՈՒՂԹ

ԹԵՐԹԵՐԸ՝ 12: - ՊՐԱԿՆԵՐԸ՝ 3, յուրաքանչյուրը 4-ական թերթից: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 21×16×0.1 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ դեղնած շատ բարակ թուղթ: - ԿԱԶՄ՝ չունի: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի: - ՎԻՃԱԿԸ՝ անբավարար: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկպուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐ՝ չկան: - ՏՈՂԵՐԸ՝ 24: - ԳԾՈՒՄՆԵՐ՝ չունի: - ԳԻՐԸ՝ նոտրգիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: Յուրաքանչյուր շաբաթաթերթի առաջին էջում, թերթի անվան և համարի թվականի ներքևում կան միայն հասարակ փոքր կարդեր: Աչքի է ընկնում թիվ 7-ի կարդանկարչությունը: - ԳՐԻՉԸ՝ անհայտ: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ անհայտ: - ԾԱԳԿՈՂԸ՝ անհայտ: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1844 թ.: - ՎԱՅՐԸ՝ Բոմբեյ /Հնդկաստան/: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ձեռագրի այս շաբաթաթերթն ստացվել է Ալեք և Մարի Մանուկյան Գանձատնից 9 հունվարի 1984 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վերոհիշյալ ձեռագիր շաբաթաթերթը փոքրածավալ չորս թերթանոց մի լրագիր է, որ լույս է տեսել Հնդկաստանի Բոմբեյ քաղաքում: Այն վիմատիպով բազմացվել է փոքր տպաքանակով և ցրվել տեղի և Հնդկաստանի հայ գաղութի կանական բնակավայրերում: 140 տարիների վաղեմություն ունեցող այս թերթի մասին ոչ մի ակնարկություն չկա վերջին տարիներս հրատարակված հայ մամուլի պատմության մասին գրված գրքերում (Ա. Կիրակոսյան և այլն): Այն սկսել է հրատարակվել 1844 թ. օգոստոսի 3-ից: Ցարդ պահպանվել է միայն երեք համար, որոնք հետևյալներն են.

ԹԹ. 1ա - 4բ, թիվ 4. շաբաթ, 24 օգոստոսի 1844 թ.

ԹԹ. 5ա - 8բ, թիվ 5, շաբաթ, 31 օգոստոսի 1844 թ.

ԹԹ. 9ա - 12բ, թիվ 7, շաբաթ, 14 սեպտեմբերի 1844 թ.

Հայտնի չէ, թե մինչև ո՞ր համարն է լույս տեսել:

Շաբաթաթերթում լույս են տեսել տեղական և ազգային լուրեր, նամակներ, եկեղեցական տոներ և այլն: Հետաքրքրության համար ստորև տրվում են մի քանի օրինակներ:

Թ. 3ա. - Ի 4 Ապրիլ Սրբական Առաջնորդն մեր Յովհաննէս (Նոր Ջուղայի - Ն. Մ.) գնացեալ է ի Թէհրան տեսանել զԱրքայն Պարսից վասն օգտի Հայոց Ջուղայու:

Ի 16 Ապրիլ յանկարծ յոյժ սաստիկ ցուրտ լեալ յԱսպահան զբոլոր պտուղս ծառոց վնասեալ է բաց ի յորթոյն:

Ի 21 Ապրիլ Հաջի Միեա Մահմա Բաղէր գլխաւոր մահմետական դրենպետն մեռաւ. որոյ հոգին ի հարկէ հանգեալ իցէ ի գոգն կանտին:

Ի 12 մէի ամսոյն անցելոյ յետ իբրև 3 ժամուց միջօրէի շարժումն (երկրաշարժ - Ն. Մ.) եղև ի Սպահան: Ի քաղաքի ումանց որմոց տանց և փողոցց քայքայումն պատճառեաց և Ջօմա կոչեցեալ մզկիթ երկու աշտարակաց (մնարի) կէսն կործանեցաւ, ումանց Ջուղայու տանց որմունք և տանիք շինուածոցն պատռեցան. բայց գոհութիւն Տէրն չեղև կորուստ անձանց:

Թ. 3բ. - Անթիւ բազմութիւն մարախաց գնացեալ է ի Շիրազայ մինչ զՊօմիշայ, որ երեք աւուրբք հեռի է ի Սպահանայ ք. բայց ողորմութիւն Աստուծոյ և աէրն սոր ունի Բարծրեալն վասն մարդկան սաստակեաց կնոսա ամենեսին սաստկագոյն ցրտով:

Թ. 7ա. - Յնծութիւն է մեկ հրատարակարել այսու, որ Պարոն Յովհաննէս Յարութիւն Աստուածատուրն երկրորդ վարժապետ մյստր Մէնվարինգի դպրոցին ի 1 հետնեալ Սէպտէմբեր ամսոյն հաստատելոց է վասն Անգղիական լեզուին: Սա առաջինն է ի մերազնէից ի Բումբայի որ յանձն առնէ զայս դժուարակիր պաշտօն Անգղիական վարժապետութեան և ի սրտէ ցանկամք՝ զի վաստակ Պարոն Յովհաննէսին աջողութեամբ պսակեսցի և քաջալերութեան մերազնէից արժանի վարկեսցի:

Թ. 8ա. - Կարծեմք մեր ընթերցողքն չեն անտեղեակ որ ի Բումբայի գողք բազմացեալ են յոյժ և զմեծամեծ վնասս տան բազմաց՝ ծածկաբար կամ բռնութեամբ մտանելով ի տունս նոցա գիշերային և զրկելով կնոսա յընչից իւրեանց: Ցաւիմք յատկապէս վասն այն մասն «Փրիքէշ» Ազգին որք ի Մայիմ բնակին, քանզի վնաս սորա մեծ է: Ասացեալ գողքն կորացուցեալ են զաղքիւր ուրախութեան Փրիքէշ ազգին Մայիմայ՝ որ է խոյն - յորմէ զրկեալք են. զխոյն ի մեծի համարի ունին սոքա և ուրախութիւնն ոչ երբեք լիցի կատարեալ եթէ ի խրախճանս իւրեանց ոչ գտցի խոյն:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա. - Բումբայու Հայոց լրաթուղթ
Շաբաթ 24 Ագօստ 1844
Նօ. 4:

Թ. 5ա. - Բումբայու Հայոց լրաթուղթ
Շաբաթ 31 Ագօստ 1844
Նօ. 5:

Թ. 8բ.- Lithographed at the
Deorbin press.
No. 98 Baner Gate Street.

Թ. 9ա. - /Բո/ւմբայու Հայոց լրաթուղթ
Շաբաթ Սեպտեմբր 14 - 1844
Նo. 7:

N° 720
ՈՒՍՈՒՄՆԱՍԵՐ ԼՐԱԳԻՐ

ԹԵՐԹԵՐԸ՝ 2: - ՊՐԱԿՆԵՐԸ՝ 1: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 38.5×28.5 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ դեղնած բարակ թուղթ: - ԿԱԶՄ՝ չունի: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի: - ՎԻՃԱԿԸ՝ բավարար: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկպուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐ՝ չկան: - ՏՈՂԵՐԸ՝ 70: - ԳԾՈՒՄՆԵՐ՝ չունի: - ԳԻՐԸ՝ նոտրգիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ առաջին էջի վերևի մասում վիմատիպով նկարված է Սինգապուր քաղաքի ընդհանուր տեսարանը ծովափին: Ծովում երևում են շուրջ 21 մեծ ու փոքր նավեր և նավակներ: Ափին երևում են բնակելի ինը շենքեր և հայոց եկեղեցին, սրածայր գմբեթով: Հետնամասում երևում են քաղաքի բլուրները, որոնցից կենտրոնականը ծածկված է ծառերով, իսկ գագաթին երևում է մի շենք, կողքին կա աշտարակ, որի գլխին դրոշակ է ծածանվում: Նկարի ներքևի ձախ անկյունում գրված է "Ph. Seth Lith." /Սեթ վիմատիպի լուսանկար/: - ԳՐԻՉԸ՝ անհայտ: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ անհայտ: - ԾԱՂԿՈՂԸ՝ անհայտ: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1 դեկտեմբերի 1851 թ.: - ՎԱՅՐԸ՝ Սինգապուր: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ձեռագիր այս թերթն ստացվել է Ալեք և Մարի Մանուկյան Գանձատնից 9 հունվարի 1984 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վերոհիշյալ ձեռագիր այս թերթը միջին ծավալով երկու թերթանոց մի լրագիր է, որ լույս է տեսել Սինգապուրում 1849-1853 թթ., ունեցել քաղաքական, գրական և առևտրական բնույթ, հավանաբար առևտրի վերաբերյալ օգտակար տեղեկություններ հայթայթելու տեղի, ինչպես նաև Հնդկաստանում և Հեռավոր Արևելքում գործող հայ վաճառականներին ու նավատերերին: Թերթի խմբագիրն է հանդիսացել Գրիգոր Գալուստյանը:

Այս թերթի մասին խոսվում է Ս. Կիրակոսյանի գրքում (Հայ պարբերական մամուլի մատենագրություն, Երևան, 1970, էջ 462, թիվ 3173): Պարզվում է, որ թերթից բավմաթիվ օրինակներ այժմ գտնվում են Երևանի կանանչան գրադարաններում:

Թերթի վերնագիրը տպագրված է այսպես.
«Ուսումնասէր լրագիր» (գրված է կարդագրերով)
Սինկափոր

Քաղաքական, գեղագիտական և առևտրական:

Թերթի այս համարում կան կանոնական տեսակի լուրեր և տեղեկություններ, ինչպես օրինակ՝

Թ. 2բ. - Անցեալ ամսոյ 17-ին ժամանմամբ «Սէնտ Աբբս» նաւին ի Չինոյ, էջ ի ցամաք Պարոն Մկրտում Գ. Մկրտումեան, որ ունի կիսառաջադրութիւն ելանելոյ առ Կալկաթա «Լէդի Մերի Վուդ» շոգենաւաւ:

Ստորև տրվում են միայն մյուս գրությունների վերնագրերը.

Թ. 1ա. - Սինկափոր: Քաղաքականք:

Թ. 1բ. - Ռանգուն և Բարմայք:

Թ. 2ա. - Կալկաթա:

Արշաւանք գաղղիացւոց առ ծովն Զապանայ:

Ամերիկացւոց նորոգ Օդագնաց նաւ:

Ժամանեալ նաւք (1851 թ. նոյեմբեր ամսին - Ն. Մ.):

Մեկնեալ նաւք (1851 թ. նոյեմբեր ամսին - Ն. Մ.):

Թ. 2բ. - Արժէք Սպրանաց

ի Սինկափոր Դեկտեմբերի 1. 1851:

(Այստեղ տրված են 89 կանոնական տեսակի ապրանքների գները):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա. - Հատ 3: Սինկափոր, Երկուշաբաթ, ի 1 Դեկտեմբերի 1851:

Երդ. Ամ, թիւ 59:

Թ. 2բ. - Տպագրի «Արփի» Վեմադարանի Պարոն Պ. Ա. Սէթի, Վասն վերատեսչաց և հրապարակի ի 1 և 15-երորդում իրաքանչիւր ամսոյ:

Ստորագրութիւնն մի կումպանի ռուփի առ ամիսն:

N° 721
ՕՐՀՆԱԳԻՐ

ԹԵՐԹԵՐԸ՝ 1: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 26.8×21 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ սպիտակ դիմացկուն մաքուր թուղթ: - ԿԱԶՄ՝ չունի: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միապույն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1բ: - ՏՈՂԵՐԸ՝ 19: - ԳԾՈՒՄՆԵՐ՝ չունի: - ԳԻՐԸ՝ նոտրգիր: - ՁԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: Միայն օրինագրի վերևի ձախակողմյան մասում կա կաթողիկոսական փոքրիկ մի խորհրդանիշ, որ ցույց է տալիս խույր, խաչ և գավազան: - ԳՐԻՉԸ ԵՎ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Սահակ Բ Խապայան՝ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո (1849-1939): - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 23 սեպտեմբերի 1919 թ.: - ՎԱՅՐԸ՝ Ադանա (Թուրքիա): - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ օրինագիրը տրված է Հովհաննես Գլրճյանին, որի լուսապատճենը տղան՝ Արթին Գլրճյանը, այլ փաստաթղթերի հետ 1976 թ. ուղարկել է Ս. Էջմիածին: Ձեռագրատունս այն ստացել է Մայր Աթոռի արխիվից 19 հունվարի 1984 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

/Խորհրդանիշը/
Կաթողիկոսարան
Հայոց տպագիր
ի Կիլիկիա
(Ներքոհիշյալ ամբողջ գրությունը ձեռագիր է և գրված Սահակ Բ Կաթողիկոսի ձեռամբ):
Մեծապատիւ
Տօքթոր Յովհաննէս Գլրճեան
ի Հալէպ.

Ներկայս կը գրեմ ոչ իբրև Հայրենակից մը առ Հայրենակիցն, այլ իբրև Կիլիկիոյ տարաբաղդ հայութեան տարաբաղդագոյն հայրը առ մարդն գիտութեան, մանաւանդ գթութեան:

Այն հոգեխորով ու դառնադառն օրերուն, երբ Հալէպ տարագիրներու դժոխքն էր, Դուք քաղաքապետական բժիշկ էիք: Ներկայ էի ժողովուրդի անօրինակ և աննախընթաց տառապանքին, ականատես էի Ձեր անվհատ ջգացումներուն մահուան ու տառապանքին դէմ, դժոխքին կեանքի և արքայութեան ձև ու կերպարանք տալու, այն ատէն ի վեր հիացումիս առարկայն եղած էք: Սուղ տողերս հիացումի և օրհնութեան իբրև առհաւատչեայ ընդունեցէք:

Ողջունելով ջձեզ համայն պարագայիւք
մնամք աղօթարար
Սահակ Բ Կթ. Կիլիկիոյ

1919 Սեպ. 23
Ստանա:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 1բ. - (Թերթի վերևի մասում կա մի կլոր կնիք, 4 սմ տրամագծով, որի կենտրոնում գրված է հետևյալը).
Հայ Առաքելական Եկեղեցւոյ Միութիւն
Նորտռայն Վէսթֆալէնի ի Քէօլնի:
(իսկ կնիքի շուրջբոլորը գրված է գերմաներենով).
Armenisch - Apostolischer Kirehenverein
e. V. von Nordrhein - Westfalen.

№ 722
ՄԱՇՏՈՑ

ԹԵՐԹԵՐԸ՝ 32: - ՊՐԱԿՆԵՐԸ՝ 2: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 13.9×9.5×2.8 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ դեղնած բարակ թուղթ: - ԿԱԶՄԸ՝ սրճագույն թղթով ծածկված հաստ ստվարաթուղթ, որի վրա ոսկեգույն երկու խաչ և վարդեր կան: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում և վերջում մեկական դեղին թուղթ: -

ՎԻՃԱԿԸ՝ բավարար: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միապուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1ա-3բ, 4բ, 7բ, 9բ, 12ա - 12բ, 16բ, 23բ - 28ա, 30ա, 31բ - 32բ: - ՏՈՂԵՐԸ՝ 13-15: - ԳԾՈՒՄՆԵՐ՝ չունի: - ԳԻՐԸ՝ շեղագիր: - ԶԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ՝ Արիստակես քահանա Չիպլեճյան: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 4 Դեկտեմբերի 1866 թ.: - ՎԱՅՐԸ՝ Թուիկաբու (Կ. Պոլիս): - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանն ստացվել է Վեհափառ Հայրապետից 27 հունվարի 1984 թ.: Սա տպագիր մի Մաշտոց է, 460 էջանոց, որ ժամանակի ընթացքում ընկած թերթերի տեղը հետագայում տերը թղթեր է ավելացրել և ձեռագրով գրել պակասած էջերը: 16բ - 18ա չորս էջերը գրված են հայատառ տաճկերենով:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 3բ. -Մեծապատիւ ոսկերիչ
Սարգիս Աղա Պետրոսեան
Մերձաւոր իմ սրտակից
և բարեկամ սիրական.
Մատոյց ի նուէր կայս Մաշտոց
անկեղծ սիրոյ գրաւական.
Ինձ նուաստիս և տր/ու/պիս
Քահանայիս անարժան.
Ի յիշատակ հին և նոր
ննջեցելոցն առ համայն.
Զորս և յիշեմք ի տան տեառն
ի պաշտամունս սրբական.
Եւ կենդանեացն իսկ նորին
կեանքս մաղթեմք տնական.
Թ. 4ա. - կրելով միշտ ի ձեռին կայս
Մատենիկ նուիրական.
որ է նուէր պատուական
գոլով գրքոյկ պաշտաման.
կալցուք ի միտս անմոռաց
հանապազօր յաւիտեան:
Տ. Արիստակէս Չիպմէճեան
4 Դեկտ/ե/մբր 1866 ի Թօփկ/ա/բու:

N° 723
ՆԱՄԱԿ
(Ֆրանսերէն)

ԹԵՐԹԵՐԸ՝ 3: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 38.1×25.4 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ մաքուր սպիտակ թուղթ: - ԿԱԶՄ՝ չունի: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միապուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1ա, 2ա և 3ա: - ՏՈՂԵՐԸ՝ 11-12: - ԳԾՈՒՄՆԵՐ՝ չունի: - ԳԻՐԸ՝ լատինատառ ձեռագիր:

- ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ ԵՎ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Մինաս Չերազ: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 10 հոկտեմբերի 1892 թ.: - ՎԱՅՐԸ՝ Լոնդոն: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ փաստաթուղթն առնվել է Անգլիայի պետական արխիվից և ուղարկվել Մայր Աթոռ Լոնդոնից 17 փետրվարի 1971 թ. տեղի Հոգևոր Հովիվ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանի կողմից: Ձեռագրատունս այն ստացել է Մայր Աթոռի արխիվից 17 փետրվարի 1984 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Փաստաթուղթը բուն նամակի լուսանկարված պատճենն է: Դիմումնագիր-նամակը գրվել է Մինաս Չերազի կողմից և ուղղվել Անգլիայի վարչապետ Գլադստոնին: Փաստաթղթում խոսվում է հայ երեք հոգևորականների բանտարկության և Զեյթունում 554 անմեղ երեխաների սպանության մասին:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

/Երեք թերթերի վերևի մասում գրված է/
տպագիր՝ Public Record Office
Reference:-
ձեռագիր՝
FO. 78/4683. 4884.

N° 724
ՆԱՄԱԿ
(Ֆրանսերէն)

ԹԵՐԹԵՐԸ՝ 8: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 38.1×25.4×0.1 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ մաքուր սպիտակ թուղթ: - ԿԱԶՄ՝ չունի: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ բոլոր 8 թղթերի թիկունքի մասը դատարկ է: - ՏՈՂԵՐԸ՝ 32-34: - ԳԾՈՒՄՆԵՐ՝ չունի: - ԳԻՐԸ՝ լատինատառ ձեռագիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ՝ անհայտ: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆԵՐ՝ Կարապետ արքեպիսկոպոս Զեյթունի և Նիկողոս արքեպիսկոպոս Ֆռնուզի: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 9/21 սեպտեմբեր 1892 թ.: - ՎԱՅՐԸ՝ Հալեպի բանտ (Սիրիա): - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ փաստաթուղթն առնվել է Անգլիայի պետական արխիվից և ուղարկվել Մայր Աթոռ Լոնդոնից 17 փետրվարի 1971 թ. տեղի Հոգևոր Հովիվ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանի կողմից: Ձեռագրատունս այն ստացել է Մայր Աթոռի արխիվից 17 փետրվարի 1984 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Փաստաթուղթը, նախորդի նման, բուն նամակի լուսանկարված պատճենն է: Դիմումնագիր նամակը գրվել է Զեյթունի Կարապետ արքեպիսկոպոսի և Ֆռնուզի Նիկողոս արքեպիսկոպոսի կողմից և ուղղվել Անգլիայի վարչապետ Գլադստոնին:

Փաստաթղթում խոսվում է երկու արքեպիսկոպոսների կողմից Գլադստոնին գրված 5/17 օգոստոսի 1892 թ. նամակ-տեղեկագրի. Օսմանյան կայսրության մեջ գտնվող մի քանի միլիոն դժբախտ հայերի ծանր կացության ու կեղեքումների, թուրք կառավարիչների գործած դաժանությունների, Հայկական հարցի, ինչպես նաև վերոհիշյալների հետ առնչվող համանման այլ խնդիրների մասին, խնդրելով միևնույն ժամանակ անգլիական կառավարության ապդեցիկ միջնորդությունը՝ վերջ տալու գավառահայության կրած հարստահարություններին և ապատելու բանտարկված հոգևորականներին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 7ա - Daignez Excellence, agréer l'expression du trés profond respect, avec lequel,

Nous avons l'honneur d'étre Vos humbles serviteurs.

Prison d'Alep, le 9/21 Septembre'/18/92

Garabed — Nicoghos

Archev. de Zeithoun — Archev. de Frnouz

(Ավագն կնիք) — *(կլոր կնիք)*

A Son Exeellenee
Monsieur Monsieur Gladston
Présidents des Ministres
etc, etc, etc
à Londres.

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

/Ուք թերթերի վերևի մասում գրված է/

տպագիր'Public Record Office

Reference:-

ձեռագիր'

FO. 78/4683.• 4884.

(Զախակողմյան լուսանցքում գրված է հայերենով)

Մյուս օրինակները ավելի հստակ են, սա լավ չի ստացվել մաքուր վերարտադրելու համար:

17-II-71 — *Արսեն Վրդ.*

Լոնտոն:

Թ. 8ա. - *Արսեն Վրդ.*

17-II-71 — *Լոնտոն:*

With Mr. Jewett Sept. 28, /18/92

(Այստեղ կա Foreign office- *ի փոքր կնիքը):*

This Petition is addressed to "the President of the House of Commons of England" not to the Pime Minister as was thought by Mr. Gladstone's Private Sec/retar/y.

26 Sep. 92
H. M. Jewett
Petitions to

1. Prime minister
2. Queen
Signed by about 250
Armenian Women of...

N° 725
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
(Ռուսերէն)

ԹԵՐԹԵՐԸ՝ 2: - ՊՐԱԿՆԵՐԸ՝ 1: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 35.6×22.3 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ դեղնած և գունաթափված բարակ թուղթ: - ԿԱԶՄ՝ չունի: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի: - ՎԻՃԱԿԸ՝ անբավարար: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միապուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐ՝ չկան: - ՏՈՂԵՐԸ՝ 31-33: - ԳԾՈՒՄՆԵՐ՝ թուղթն ինքնին գծավոր է: - ԳԻՐԸ՝ ռուսերեն ձեռագիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ՝ անհայտ: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Մրգաստան գյուղի Ս. Հովհաննես եկեղեցու հոգաբարձություն: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1 ապրիլի 1912 թ.: - ՎԱՅՐԸ՝ Վաղարշապատ: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիր պայմանագիրը նվեր է ստացվել 1983 թ. հունիսի 17-ին Մրգաստան գյուղի բնակիչ Խաչիկ Թեոսի Ավագյանից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ռուսերեն սույն պայմանագիրը կապվել է Էջմիածնի շրջանի (նախկին Վաղարշապատի) Մրգաստան (նախկին Հաջիլար) գյուղի Ս. Հովհաննես եկեղեցու նորոգության առթիվ:

Այն հաստատվել է պաշտոնապես 1912 թ. Վաղարշապատի պետական նոտարիուսի՝ Անդրեյ Գամբիուսովիչ Բաբաևյանցի կողմից, իր ստորագրությամբ և կլոր կնիքով:

Այստեղ կան ցարական չորս նամականիշեր, որոնք կնքված են:

4-րդ էջի (Թ. 2բ) ներքևի մասում կան մի շարք հայերեն ստորագրություններ, որոնք դրված են հայերեն գրված կարճ ստացականների տակ: Դրամական այս ստացականները ցույց են տալիս, որ եկեղեցու հոգաբարձությունը նորոգության համար մաս-մաս գումարներ է վճարել եկեղեցին նորոգող բանվորներին:

Ոչ գրաճանաչ բանվորներ Տրդատ Մարտիրոսյանի և Ոսկան Մկրտչյանի փոխարեն ստորագրել են Մկրտիչ Ալեքսանյանն ու Պետրոս Եղ/ի/ազարյանը: Մի ուրիշ անգամ ստորագրել է Ավագ քահանա Ավագյանցը, կամ Հովհաննես Խաչատուրյանը:

N° 726
ՆԱՄԱԿ

ԹԵՐԹԵՐԸ՝ 3: - ՊՐԱԿՆԵՐԸ՝ 1:- ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 27.8×22 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ նամակի հասարակ թուղթ: - ԿԱԶՄ՝ չունի: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միապուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1բ, 2բ և 3բ: - ՏՈՂԵՐԸ՝ 30: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է: - ԳԻՐԸ՝ ձեռագիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: -

ԳՐԻՉԸ՝ Խորէն Ա Բարոյան՝ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 20 հունվարի 1971 թ.: - ՎԱՅՐԸ՝ Անթիլիաս /Լիբանան/: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ձեռագիր նամակն ստացվել է 11 հուլիսի 1984 թ. Մայր Աթոռի արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նամակն ուղղվել է Հայկազուն Արքեպիսկոպոս Աբրահամյանին և կրում է անձնական բնույթ:

Նամակի բովանդակությունը շոշափում է Էջմիածին-Անթիլիաս հարաբերության մի շարք հարցեր:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա - Անձնական:

20 Յունուար 1971.
Անթիլիաս:
Սիրելի Հայկազուն Արքայան:

Թ. 3ա - Մնամ սիրով և կարօտով՝
Խորէն Ա.

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա. - Վ. Ա.
N *94*
6. II. 71:

N° 727
ՄԱՏԵԱՆ

ԹԵՐԹԵՐԸ՝ 131: - ՊՐԱԿՆԵՐԸ՝ 13, յուրաքանչյուրը 10-ական թերթից: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 36.5×24.3×2.5 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ սպիտակ մաքուր դիմացկուն թուղթ: - ԿԱԶՄԸ՝ սև լաթակալ հաստ ստվարաթուղթ: :- ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում և վերջում մեկական կանաչ թուղթ, որի վրա բազմաթիվ անգամ ETERNA *է տպված: - ՎԻՃԱԿԸ՝ անբավարար, տեքստի բաժինն անջատված է կազմից: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ գրված է հինգ սյունակի վրա /համար, թվական, ո՞ր երկրից, քանի՞ հոգի, ծանոթություններ/: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1ա-3ա, 131բ: - ՏՈՂԵՐԸ՝ 37: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է: - ԳԻՐԸ՝ շեղագիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ՝ Մայր Տաճարի թանգարանի կանայան աշխատակիցներ: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1976-1983 թթ.: - ՎԱՅՐԸ՝ Ս. Էջմիածնի վանք: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ձեռագիրն ստացվել է Մայր Աթոռի արխիվից 5 օգոստոսի 1984 թ.:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մատյանը պարունակում է ութ տարում /24 ապրիլի 1976 թվականից մինչև 31 դեկտեմբերի 1983 թ. ներառյալ/ արտասահմանյան կանանց երկրներից Ս. Էջմիածնի Մայր Տաճարի թանգարան այցելողների խմբական ցուցակները:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 2ա.- Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Մայր Տաճարի
ՄԱՏԵԱՆ
Օտարերկրյա այցելուների
1976-1983:

N° 728
ՄԱՏԵԱՆ

ԹԵՐԹԵՐԸ՝ 150: - ՊՐԱԿՆԵՐԸ՝ 15, յուրաքանչյուրը 10-ական թերթից: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 36×24×2.7 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ սպիտակ մաքուր դիմացկուն թուղթ: - ԿԱԶՄԸ՝ սև լաթակապմ հաստ ստվարաթուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում և վերջում մեկական կանաչ թուղթ, որի վրա բապմաթիվ անգամ ETERNA է տպված: - ՎԻԺԱԿԸ՝ բավարար, սակայն կապմի սև շորի մեկ մասը պատռված է: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ գրված է երեք սյունակի վրա: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 147ա-150բ: - ՏՈՂԵՐԸ՝ 40: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է: - ԳԻՐԸ՝ շեղագիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ՝ Մայր Տաճարի թանգարանի կանանց աշխատակիցներ: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1963-1976 թթ.: - ՎԱՅՐԸ՝ Ս. Էջմիածնի վանք: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ձեռագիրն ստացվել է Մայր Աթոռի արխիվից 22 սեպտեմբերի 1984 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախորդի նման մատյանը պարունակում է 14 տարում /1 հոկտեմբերի 1963 թվականից մինչև 26 ապրիլի 1976 թ. ներառյալ/ արտասահմանյան կանանց երկրներից Ս. Էջմիածնի Մայր Տաճարի թանգարան այցելողների խմբական ցուցակները, որոնց մեջ մտնում են և՛ ուխտուղաներ, և՛ օտարազգի խմբեր:

Այս տարիներին ևս Մայր Աթոռ են այցելել աշխարհի չորս կողմերից ժամանած ավելի քան հիսուն տարբեր երկրներից զբոսաշրջիկներ և պետական-պաշտոնական խմբեր:

№ 729
ՄԱՏԵԱՆ

ԹԵՐԹԵՐԸ՝ 100: - ՊՐԱԿՆԵՐԸ՝ 5. յուրաքանչյուրը 20-ական թերթից: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 30.2×21.1×1.2 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ հասարակ դեղնավուն թուղթ: - ԿԱԶՄԸ՝ թղթակապ բարակ ստվարաթուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում և վերջում մեկական բաց կապտավուն հասարակ թուղթ: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ 5 պունակ /թթ. 1բ-30ա/ և 7 պունակ /թթ. 30բ-100ա/: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1ա և 100բ: - ՏՈՂԵՐԸ՝ 32: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է: - ԳԻՐԸ՝ շեղագիր: - ՁԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉՆԵՐԸ՝ չորս անձինք՝ Տ. Սահակ Եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան, Ն. Միքայելյան, Ե. Վարդերեսյան և Հ. Առաքելյան: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Մայր Աթոռի դիվանատուն: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1955-57 թթ.: - ՎԱՅՐԸ՝ Ս. Էջմիածնի վանք: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանն ստացվել է Մայր Աթոռի արխիվից 11 սեպտեմբերի 1984 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սույն ձեռագիր մատյանը հանդիսանում է Մայր Աթոռի ստացած նամակների ընդհանուր ցուցակը 8 հունվարի 1955 թվականից մինչև 31 օգոստոսի 1957 թ.: Սկզբում արձանագրվել է նաև հինգ նամակ, որոնք ստացվել են 11-30 դեկտեմբերի 1954 թ.:

Մայր Աթոռի չորս աշխատակիցներ հանդիսանում են սույն մատյանի գրիչները, որոնք հետևյալներն են.

1. Տ. Սահակ Եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան՝
11 դեկտեմբերի 1954-ից մինչև 27 օգոստոսի 1955 թ. /թթ. 1բ-30ա/:
2. Եղիշե Վարդերեսյան՝
21 հունիսի 1956 - 10 հուլիսի 1956 թ. /թթ. 56բ-60ա/:
3. Հայկ Առաքելյան՝
17 հուլիսի 1956 - 6 օգոստոսի 1956 թ. /թթ. 60բ-63ա/:
4. Նուբար Միքայելյան՝
15 դեկտեմբերի 1955 - 13 հունիսի 1956 թ. /թթ. 30բ-56ա/:
9 օգոստոսի 1956 - 31 օգոստոսի 1957 թ. /թթ. 63բ-100ա/:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

/Կազմի առաջին երեսի վրա գրված է/
Մատեան
Գեր. Հոգևոր Խորհրդի Դիվանի
սկսված 1/I-55 թ.
Մտից գործոց.
ավարտված 31 օգոստոս 1957 թ.:
Թ. 2ա.- Գրեց Սահակ Եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան:

Թ. 31.- Գրեց Նուբար Միքայելյան:
Թ. 57ա.- Գրեց Եղիշե Վարդերեսյան:
Թ. 61ա.- Գրեց Հայկ Առաքելյան:
Թ. 64ա.- Գրեց Նուբար Միքայելյան:

№ 730
ՄԱՏԵԱՆ

ԹԵՐԹԵՐԸ՝ 100: - ՊՐԱԿՆԵՐԸ՝ 5, յուրաքանչյուրը 20-ական թերթից:- ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 29.5×21×1.1 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ սպիտակ մաքուր թուղթ: - ԿԱԶՄԸ՝ թղթակազմ միջակ հաստությամբ ստվարաթուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում և վերջում մեկական հաստարակ դեղին թուղթ: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ յոթ սյունակ: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1ա, 28բ-100բ: - ՏՈՂԵՐԸ՝ 33: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է: - ԳԻՐԸ՝ շեղագիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ՝ Նուբար Միքայելյան: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Մայր Աթոռի դիվանատուն:- ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1960 թ.: - ՎԱՅՐԸ՝ Ս. Էջմիածնի վանք: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանն ստացվել է Մայր Աթոռի արխիվից 11 սեպտեմբերի 1984 թ.:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Սույն ձեռագիրը հանդիսանում է Մտից մատյանը Մայր Աթոռում ստացված նամակների, 1960 թվականի մարտի 14-ից սկսած մինչև 31 դեկտեմբերը: Ստացված գրությունները, Սփյուռքից և ներքին թեմերից, համարակալված են թիվ, թիվ 225-1008:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

/ Կազմի առաջին երեսի վրա գրված է/
Ս. Էջմիածնի Դիվանատուն
Մտից մատյան
Սկսված 14 մարտի 1960 թ.
Ավարտված 31 դեկտեմբերի 1960 թ.:
Թ. 28ա. - Գրեց Դիվանատան քարտուղար Նուբար Միքայելյան:

(Շարունակելի)